

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, Y. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am

N 02/22/39985-2024

www.mediaforedu.am կայքի խմբագիր՝

ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Էլ. փոստ՝ [REDACTED] [@civilnet.am](mailto:[REDACTED]@civilnet.am)

Ի պատրաստման Ձեր՝ 16.12.2024 թ. հարցման

Հարգելի՛ Անուշ Մարտիրոսյան,

- Կամավոր ատեստավորման արդյունքների անհամաձայնության վերաբերյալ ատեստավորումը կազմակերպող մարմին է ներկայացվել շուրջ 1500 բողոք:
- Բողոքարկման գործընթացից առաջ ընդհանուր պատկերը հետևյալն էր՝ 0-59 % արդյունք էր ցուցաբերել 1350 ուսուցիչ/անձ, 60-69 %՝ 1127-ը, 70-79 %՝ 1074-ը, 80-89 %՝ 918-ը, 90-100 % -529-ը:

Ընդհանուր պատկերը՝ բողոքարկման գործընթացից հետո՝


- 60-69% արդյունք ցուցաբերել է 1073-ը. նրանք ունենալու են միայն դրույքաչափի փոփոխություն (200 հազար դրամ՝ 1 դրույք զբաղվածության համար),
- 70-79% արդյունք են ցուցաբերել 1158-ը (հավելավճարը կտրվի մանկավարժական աշխատավարձի 30 տոկոսի չափով),
- 80-89% արդյունք է ցուցաբերել 989-ը (հավելավճարը կտրվի մանկավարժական աշխատավարձի 40 տոկոսի չափով),
- 90-100% արդյունք է ցուցաբերել 600-ը (հավելավճարը կտրվի մանկավարժական աշխատավարձի 50 տոկոսի չափով),
- 0-59 տոկոս արդյունք է ցուցաբերել 1162-ը:

Տեղեկացնում ենք, որ բոլոր առարկաների վերաբերյալ բողոքարկման հանձնաժողովի որոշումներին հնարավոր է ծանոթանալ Գնահատման և թեստավորման կենտրոնի պաշտոնական կայքէջից: Կամավոր ատեստավորման ամփոփված արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն հնարավոր է ստանալ ՀՀ

կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայքից հետևյալ հղմամբ՝ <https://escs.am/am/news/26428>:

Ձեր հարցմամբ ներկայացված մյուս կետերի վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների համաձայն՝ կամավոր ատեստավորումն անցկացվում է էլեկտրոնային թեստավորման եղանակով, որի համակարգումն իրականացնում է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը (ԿՏԱԿ): Եվ կամավոր ատեստավորման ընթացքում առաջացած տեխնիկական խնդիրների վերաբերյալ ներկայացված բողոքներին ԿՏԱԿ-ի կողմից տրվել է համապատասխան պարզաբանում, ըստ որի՝ համակարգը որևէ տեխնիկական կամ ծրագրային խնդիր չի ունեցել: Առաջադրանքների կողքին եղել է վահանակ (scroll)^{նկ1}, որի միջոցով հնարավոր էր տեսնել բոլոր առաջադրանքները:

Նկար 1.



Միաժամանակ հաշվի առնելով կամավոր ատեստավորումն էլեկտրոնային թեստավորման եղանակով անցկացնելու հանգամանքը՝ հրապարակվել էր համակարգչային թեստավորման տեսաուղեցույց, որում նշված է եղել նաև առաջադրանքների քանակը՝ ատեստավորման դիմած ուսուցիչներին նախապես իրազեկելով այդ մասին:

 Recoverable Signature



ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Signed by: SVAJYAN ARAKSIA 6304780168

ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ

Կատ.՝ Հանրակրթական և արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Խաչատրյան, հեռ.՝ 010599610,
Տեղեկատվության բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Բաղդյան, 010599612: